

**«ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ «ԳՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/15»**

Բ. Գավառ

03 դեկտեմբերի 2020թ.
~~«~~ նոյեմբեր 2020թ.

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ստուդիո Արտագերս» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Լ. Ավետիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **տպագրական աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«Գավառի պետական համալսարան»
հիմնադրամ

ՀՀ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1
«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ Կամո մ/6
ՀՀ 16021100146800
ՀՎՀՀ 08402753



Ռ. Հակոբյան

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Ստուդիո Արտագերս» ՍՊԸ

Կոտայքի մարզ, գ. Ջովունի 9-րդ փողոց
102/5
«Ինելիո բանկ» ՓԲԸ Կորյուն մ/6

Հ/Հ 0504222168416001
ՀՎՀՀ 03312929

Ստուդիո Արտագերս

Արտագերս



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Ղ դրամ

Աշխատանքի

հրավեր ով նախատ եսված չափաբ ածնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափ ման միա վորը	միավո ր գինը/Հ Հ դրամ	ընդհանո ր գինը/ՀՀ դրամ	ընդի անու ր քան ակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը**
1	79811100	<p>«Գիտական հոդվածների ժողովածու թիվ 8 2020թ.» գրքի տպագրություն, Գրքի չափսերը B5, 70 X 100 / 16 (170 x 240) սմ ավարտական տեսքով, տառատեսակը՝ GHEA Grapalat, տառաչափը՝ 10.5, տողերի միջակայք՝ 1.12: Տպագրության տեսակը՝ օֆսեթային, էջերի թուղթը՝ օֆսեթ 70գ.մ2, երկկողմանի տպագրություն, էջակալված, ներառված հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով հոդվածներ, հոդվածների եռալեզու ցանկեր և սեղմագրերի գրառումներ: Գրքի կազմը՝ ֆուտբորտ, 250գ/մ2, բաց ծիրանագույն ֆոն, 4 գույն, լամինացված, Գավառի պետական համալսարանի լոգոտիպով: Կազմարարության եղանակը՝ թելակար, ջերմաստանծված: Ներսի էջերի քանակը՝ 466 էջ, որից 10 էջը՝ գունավոր տպագրությամբ: (գունավոր տպագրություն ենթակա էջեր են՝ 102; 108; 129; 208; 210; 211; 226; 227; 229; 231) Տպագրման ենթակա նյութերը խմբագրված են, անհրաժեշտ է կատարել գրքի սրբագրման աշխատանքներ:</p>	հատ	3800	304000	80	Ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	25.12.2020թ
2	79811100	<p>«Գիտական հոդվածների ժողովածու թիվ 9 2020թ.» գրքի տպագրություն, Գրքի չափսերը B5, 70 X 100 / 16 (170 x 240) սմ ավարտական տեսքով, տառատեսակը՝ GHEA Grapalat, տառաչափը՝ 10.5, տողերի միջակայք՝ 1.12: Տպագրության տեսակը՝ օֆսեթային, էջերի թուղթը՝ օֆսեթ 70գ.մ2, երկկողմանի տպագրություն, էջակալված, ներառված հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով հոդվածներ, հոդվածների եռալեզու ցանկեր և սեղմագրերի գրառումներ: Գրքի կազմը՝ ֆուտբորտ, 250գ/մ2, բաց ծիրանագույն ֆոն, 4 գույն, լամինացված, Գավառի պետական համալսարանի լոգոտիպով: Կազմարարության եղանակը՝ թելակար, ջերմաստանծված: Ներսի էջերի քանակը՝ 468 էջ, որից 17 էջը՝ գունավոր տպագրությամբ: (գունավոր տպագրություն ենթակա էջեր են՝ (133; 145; 146; 171; 172; 173; 174; 175; 276; 290; 293; 347; 348; 349; 350; 351; 352) Տպագրման ենթակա նյութերը խմբագրված են, անհրաժեշտ է կատարել գրքի սրբագրման աշխատանքներ:</p>	հատ	3850	269500	70	Ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	25.12.2020թ



